

70. ՄԱՐԹԸ ՆԱՆ ԱՐՁԸ

Մին մարթ քյինամ ա, Քա շոռ կյա ուրանց կորած կովը քթենա։ Քըթենում չի։ Շատ վրեր շոռ ա կյամ, նզանում ա։ Հավան էլ ցորտ ա ինում, արդեն մըթնըժոռած։ Կրակ ա անում, վրեր համ մխըրե թըքանա, համ էլ դինչանա։ Բուրդանն մին արշ կյամ ա կոխկեն վրենը կենում։ Տրա սուրփատուծը կտրում ա, շատ ա վախում, ըսկսում ա ուզտաղալը, գլուզում չի Քա հինչ անե։ Լիհա ինդի գեդինա ծեռքը տանում ա բիդի չինատակը։ Ծշում ա տրեսնում արշն էլ ուրանն ըռաչի Քանթունն ա տանում բիդի ուրանն չինատակը։ Մինգյել ըսկսում ա վիզը քորելը։ Արշն էլ ա վիզը քորում։ Մինգյել ծեռքը տանում ա բիդի վենը։ Արշն էլ ուրանն Քանթունն ա տանում բիդի վենը։ Վերջը, տա հինչ վրեր անում ար, արշն էլ հանամն էտ պենը մարթին մնան լոխ անում ա։ Էս մարթը մնամ ա ըրմացած։ Օգում ա արշին մին քյանգյ կյա, նեստա ըզրդվե, դե էլ օրիշ Քահրը չի կա, հինչ կըկա՞ռե անե։ Տի վրեր շատ մըտածում ա, արշն էլ սուս ըրած տրան նշում ա, Քա տեսնա տա հինչ ա օգում անե։ Էս մարթը բուրդանն մին իրիլիս խանձուղ ա յոր օնում, բիդի ուրանն ջանը տանում։ Արշն էլ մին օրիշ իրիլիս խանձուղ ա յոր օնում, բիդի ուրանն ջանը տանում։ Էտ անդարն էլ խե շատ պիրթպրթատ ա ինում, կրակը մազերը փոնում ա, ըսկսում ալավ ինգյիլը։ Արշը ըսկսում ա վազ-վազ անելը, հիշքան վազ-վազ ա անում, էնքան շատ ա ջանը ալավ ինգյում։ Վերջը, մարթը տրեսնում ա, վրեր արշն էն ա շաղված, ուրանն անամ իլած, Քոզում ա փախնում։